



British Embassy  
Yerevan



Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարություն

«Աջակցություն Հայաստանի կառավարությանը պատշաճ իրականացնելու Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող Գործողությունների ծրագիրը հասարակությանը կրթելու և շահագրգիռ մարմիններին ընտանեկան բռնությանն առնչվող խնդիրների վերաբերյալ վերապատրաստելու նպատակով» ծրագիր

## **ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Նպատակը:** Սույն աշխատանքի նպատակն է մշակել և ներկայացնել ընտանիքում բռնության թեմային վերաբերելի պետական ծառայողների վերապատրաստման ծրագիր՝ հիմնված ՀՀ-ում ընտանիքում բռնության արձագանքման հիմնական մարմինների վերապատրաստման ծրագրերի բովանդակության գնահատման, միջազգային փորձի ուսումնասիրություն վրա:

**Մեթոդաբանություն:** Հանրային ծառայողների համար նախատեսված սույն վերապատրաստման ծրագրի մշակման, կազման հիմք են հանդիսացել.

- Ընտանիքում բռնության հետ կապված հիմնախնդիրներով զբաղվող հանրային ծառայողների վերապատրաստման առկա ծրագրերի բովանդակության ուսումնասիրությունը: Ուսումնասիրվել են Արդարադատության ակադեմիայում դատավորների, դատախազների, քննչական կոմիտեի քննիչների, ՀԲԾ քննիչների, «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստման դասընթացների առկա ծրագրերը:
- Միջազգային ԸԲ լավագույն կրթական ծրագրի ուսումնասիրություն: Իրականացվել է տարբեր պետությունների /հիմ. Վրաստան/ և կազմակերպությունների ընտանիքում բռնության արձագանքման հիմնական մարմինների վերապատրաստման ծրագրերի միջազգային փորձի ուսումնասիրմամբ:

Ծրագիրն իրականացվել է Բրիտանական դեսպանատան աջակցությամբ:

Փաստաթղթում առկա կարծիքները կարող են չհամընկնել

Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական տեսակետի հետ:

**Ծրագրի հիմնական թիրախ խումբը:** Ընտանիքում բռնության հետ կապված հիմնախնդիրներով զբաղվող հանրային ծառայողներ, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի վերապատրաստումների ծրագրերում ընդգրկված հանրային ծառայողներ:

**Ծրագրի տևողությունը, կառուցվածքը:** 1,5 ամիս, նկարագիր-մոդուլ, ծրագրի ակնկալվող արդյունքներ, գնահատման չափանիշներ, իրականացման մոդելներ

**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ**  
**ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ**  
**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ**

h/h		Ընդամեն ը	Դաս.	Սեմ.	Գործն.
1	2	3	4	5	6
<b>Բռնություն ընտանիքում: Ընդհանուր սահմանումներ</b>					
1.	Բռնության հիմնախնդիրը ընտանիքում: Վիճակագրություն և տարածվածություն Հայաստանում	2	2		
2.	Հասկացության սահմանում, տեսակներ և առանձնահատկություններ: Ընտանիքում բռնության փուլեր, բռնարար հարաբերությունների դինամիկա	2	1	1	
3.	Հասարակական մոտեցումներ և դիրքորոշումներ Ընտանիքում բռնության պատճառները/առկա կարծրատիպեր, ավանդական պատկերացումներ և փաստեր/, նպաստող գործոններ /սոցիալական և մշակութային գործոններ/	2	1	1	
4.	Սեռական բռնություն: Սեռական բռնությունը կանանց, անչափահասների նկատմամբ	2	1	1	
5.	Ընտանիքում բռնության հետևանքով անձի մոտ դրսևորվող հոգեբանական վնասվածքները, հոգեկան տրավմա և սթրես	2	1	1	
6.	Զոհի, բռնարարի, վկայի հոգեբանական դիմանկարը Ստոկհոլմի սինդրոմ, Դուլության մոդել	1	1		
7.	Բռնարարի և զոհի փոխհարաբերությունները Զոհի հետ նույնականացում	1	1		
8.	Բռնարարի հետ համակեցության/գոյակցության/ պատճառներ Ընտանիքում բռնության զոհի կամ ականատեսի/վկայի/ կողմից բռնության թաքցնում կամ ժխտում,	1		1	
9.	Ընտանիքում բռնության դեպքերի օրինակների ուսումնասիրություն և քննարկում /case study/	2		1	1

	<b>Ընդամենը</b>	15	8	6	1
<b>Երեխաների նկատմամբ բռնությունը ընտանիքում</b>					
10.	Ընտանիքում երեխաների նկատմամբ բռնի/դաժան/ վերաբերմունքի ձևերը, հիմնական պատճառներն ու հետևանքները,	1	1		
11.	Ընտանիքում դաժան բռնության ենթարկված երեխաների հոգեբանական դիմանկարը, ծնողների կողմից բռնության նշաններ	1		1	
12.	Բռնության ենթարկված երեխաների հետ աշխատանքի առանձնահատկությունները	2		1	1
13.	Երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և /կամ/ սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերում, կասկածելի և հաստատված դեպքերի գրանցում /ՀՀ ԱՍՀՆ (2016թ-ի դեկտեմբերի 22-ի N120-Ն) և ՀՀ ԿԳՆ (2016թ-ի դեկտեմբերի 27-ի N1349-Ն ) նախարարների համատեղ հրաման	1	1		
14.	Երեխայակենտրոն մոտեցումներ և աշխատանք: Երեխայի լավագույն շահ	1	1		
15.	Բռնության ճանաչման և նույնականացման գործիքակազմ	1			1
16.	Երեխաների նկատմամբ, երեխաների կողմից բռնության դեպքերի օրինակների ուսումնասիրություն և քննարկում /case study/	2		1	1
	<b>Ընդամենը</b>	9	3	3	3
<b>Աշխատանքի առանձնահատկություններ</b>					
17.	Ընտանիքում բռնության զոհերի հետ փոխհարաբերությունների էթիկական սկզբունքներն ու առանձնահատկությունները	1	1		
18.	Ընտանիքում բռնության նկատմամբ զգայունություն	1	1		
19.	Զոհերի, վկաների և ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ	1		1	

	զրույցի անցկացման առանձնահատկությունները				
20.	Դաշտային աշխատանք: Զրույցի պլանի մշակում, զրույցի փորձնական անցկացում	2			2
21.	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչներ: «Ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձի հայտնաբերում: ՀՀ ԱՍՀՆ նախարարի 2015թ. -ի հոկտեմբերի 20-ի N144-Ա/1 հրաման	4	2	2	
22.	Ընտանիքում բռնության բացահայտման, նույնականացման և պաշտպանության միջոցների կիրառման առանձնահատկությունները	2	1		1
23.	Բռնարարի/վտանգ ներկայացնող անձի վտանգավորության աստիճանի գնահատում	1		1	
24.	Բռնարարի/վտանգ ներկայացնող անձի հետ աշխատանքի առանձնահատկությունները	2	1		1
25.	Զոհի անվտանգության ապահովման, անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների կայացում	1	1		
26.	Ընտանիքում բռնություն գործադրած անձանց հետ տարվող կանխարգելիչ աշխատանքների առանձնահատկությունները	2	1	1	
27.	Ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցում ՀՀ ԱՍՀՆ նախարարի 2018թ. -ի հուլիսի 27- N85-Ն հրաման	1	1		
28.	Տուժողի ճանաչման և գնահատման մեխանիզմներ	2		1	1
29.	Կրկնակի զոհականացման կանխարգելում: Տուժողների կրկնակի զոհ դառնալու վտանգի կանխման մեխանիզմներ	2	1	1	
30.	Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիր ՀՀ ԱՍՀՆ նախարարի 2018թ. -ի հուլիսի 27-ի N84-Ն հրաման	2	1	1	
31.	Ընտանիքում բռնության կանխման և նվազեցման, ռիսկերի կարգավորման պլանի մշակում և իրագործում	2		1	1
32.	Իրական պատմություններ:	1	1		

	Ընտանիքում բռնության ահազանգում				
33.	Ուղղորդման ընթացակարգեր և մեխանիզմները: Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ուղղորդման ուղեցույց ՀՀ ԱՍՀՆ նախարարի 2015թ. -ի դեկտեմբերի 10-ի N177-Ա/1 հրաման	2	1	1	
34.	Համագործակցային աշխատանք: ՀԿ-ների, ԶԼՄ-ների դերը տուժողների շահերի պաշտպանության գործընթացում	1	1		
35.	Համայնքի դերը ընտանիքում բռնության բացահայտման, կանխարգելման աշխատանքներում Համայնքի հետ համագործակցային աշխատանք	2	1	1	
36.	Սոցիալական աջակցության ծառայությունների գործունեության շրջանակ: ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1044-Ն որոշում Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգ սահմանելու մասին	2	1	1	
37.	Ընտանիքում բռնության դեպքերի օրինակների ուսումնասիրություն, միջամտության պլանի կազմում	2		1	1
38.	Ընտանիքում բռնության դեպքերի արձագանքում, բացահայտում, հետագա կանխարգելում	2		1	1
39.	Դաշտային աշխատանք: Դեպքի ուսումնասիրության պլանի մշակում, դեպքի փորձնական վարում	2			2
	<b>Ընդամենը</b>	35	14	12	9
<b>Իրավական կարգավորումների շրջանակ</b>					
40.	Իրավապաշտպան մարմինների դերի, արձագանքի փոփոխություն Արդարադատության մատչելիություն	2	2		
41.	Ընտանեկան բռնության Միջազգային և Եվրոպական օրենսդրության իրավական շրջանակ, չափորոշիչներ	2	2		
42.	ՀՀ-ում ընտանիքում բռնության վերաբերյալ հիմնական օրենսդրության շրջանակ, ներպետական իրավական ակտեր	2	1	1	

43.	ՀՀ-ում ընտանեկան հանցավորության միտումները, հետաքննության հիմնախնդիրները	2	2		
44.	Բռնարարի/վտանգ ներկայացնող անձի/, զոհերի, ականատեսների իրավունքները և կարիքները	2	1	1	
45.	Ընտանիքում բռնության կանխարգելման իրավական մեխանիզմներ և դրանց կապը քրեական դատավարության հետ	2	2		
46.	Ընտանիքում բռնության հիմնախնդրին առնչվող մարմինների,՝ ոստիկանության և դատարանների գործունեության շրջանակ, լիազորություններ, հիմնական մարմիններ և գործառություններ, բազմագերատեսչական արդյունավետ համագործակցություն	4	2	2	
47.	Ընտանիքում բռնության դեպքերի օրինակների ուսումնասիրություն և քննարկում /case study/: Տեղական ու միջազգային դատական դեպքեր	2		1	1
	<b>Ընդամենը</b>	18	12	5	1

**ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Ակնկալվող արդյունքներ:** Դասընթացի ավարտին վերապատրաստման ծրագիրն անցած հանրային ծառայողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ ու գործնական հմտություններ՝ ընտանիքում բռնության հիմնական տեսական շրջանակի, երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության, ընտանիքում բռնության մասնակից կողմերի հետ աշխատանքի առանձնահատկությունների և տեղական ու միջազգային իրավակարգավորումների վերաբերյալ:

**Գնահատման չափանիշներ:**

Բաղադրիչ 1– Հաճախում/մասնակցություն: Ընդհանուր մոդուլի, առանձին թեմատիկ շրջանակներից յուրաքանչյուրի մասնակցություն- 70%

Բաղադրիչ 2 – Ընթացիկ (լսարանային և էլեկտրոնային) հանձնարարականների կատարում- 30%

**Իրականացման մոդելներ.**

*Մոդել 1.*

- Վերապատրաստման ծրագիրը դիտարկվում է որպես մեկ ընդհանուր միավոր,
- Ծրագրի իրականացման և գնահատման համար պատասխանատու է մեկ կառույց,
- Դասընթացի թիրախ խումբը տարբեր գերատեսչությունների, կառույցների հանրային ծառայողներն են,
- Դասընթացն իրականացվում է ԸԲ ազգային փորձագետ-դասընթացավարների կողմից ողջ ծավալով:

*Մոդել 2.*

- Վերապատրաստման ծրագրի յուրաքանչյուր առանձին թեմատիկ շրջանակ դիտարկվում է որպես առանձին մեկ միավոր,
- Ծրագրի թեմատիկ շրջանակի իրականացման և գնահատման համար պատասխանատու է առանձնացված կառույցը, որն իրականացնում է ծրագրի՝ իր գործունեության շրջանակին համապատասխան բաղադրիչները,
- Դասընթացի թիրախ խումբը առանձնացված կառույցի հանրային ծառայողներն են,
- Դասընթացն իրականացվում է տվյալ կառույցի դասընթացավարների կողմից, ովքեր անցել են վերապատրաստողների վերապատրաստում /TOT/ ԸԲ ազգային փորձագետ-դասընթացավարների կողմից: